

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ририкъ

Радзивиловъ Степанъ



193 pp.

06 JUN 2009

Ա. ԲՈՒՐՍՈՎ

ԹԱԿԳԱՐԱՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

069
F-93

ԳԵՂԱՐՔԱ

1931

65004.076

14509

565

Ե-93

Ար

Ա. ԲՈՒԲՆՈՎ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վաղջականի խոսք յեվ ճառ՝ արտասանած բանգարանային
առաջին համազումարում:
(1-6 դեկտեմբերի 1930 թ.)

843



1931 ՏԵՇԵՎ, Ա. 6

11323-57

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՋԲՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Ընկերներ, հատուկ գործուղումս արգելք և հանդիսանում ինձ անձամբ մասնակցելու թանգարանային առաջին համագումարի աշխատանքներին:

Թույլ տվեք ինձ ջերմագին վողջունելու համագումարին մասնակցողներին, իսկ հանձինս նրանց՝ թանգարանային բոլոր աշխատավորներին, վորոնք մեր իերէրի լայնածավալակերիտրիայում տանում են թանգարանային գործի վերակազմության աշխատանքն, ամեն կերպ հարմարեցնելու այն սոցիալիզմի կառուցման կարևորագույն խնդիրներին:

Այդ աշխատանքի լիակատար հաջողության համար, վորի նշանակությունը պատմական շրջանի ներկա պայմաններում՝ չափազանց մեծանում և, անհրաժեշտ և, վոր թանգարանային մասնագետների կազմերը վերջնականացնես թողնեն քաղաքական այն չեղորությունը, վորն ամբողջ ճակատով ծավալիող սոցիալստական արշավի պայմաններում միանգաման անհանգուրժելի յի և հանդիսանում և ամենավլխավոր խոշնդուան արմատապես վերակազմելու թանգարանային վողջ գործը, վորն առաջ և քաշվում ներկայումս իրեն խորհրդային պետական գործունելության հերթական խնդիր այդ ասպարիգում:

Ես հարկադրված եմ նշեմ վոր մեր թանգարանային ցանցն ու թանգարանային աշխատանքը, ավե-

Հրատ. № 1606

Դրամեպ. № 6351 (բ). Պատ. № 2186. Տիրաժ 1500

Պետհրատի ապարան Յերևանում.

Ի՞ քան խորհրդացին շինարարության վորեւ այլ ձյուղ՝
պահպանել են իրենց մեջ զբալի չափով հետամսացու-
թյան մնացորդներ, կտրվելով շինարարության ու պար-
քարի այսորվա ակտուալ խնդիրներից, նրանք պահ-
պանել են իրենց մեջ թանգարանների ներքին կազմա-
կերպության մեթոդների արխայիկմ (հնություն), ճա-
ցումն ու հնամոլությունը թանգարանալին եքսպոզի-
ցիայի խնդիրների մշակման ու լուծման գործում և
այլն:

Յես հեռու լեմ թանգարանալին գործի ներկա
դրության պատասխանատվությունը թանգարանային
աշխատավորների կազրերի վրա բարդելու մտքից:

Յես անհրաժեշտ եմ համարում այստեղ, թանգա-
րանային այս առաջին համագումարում, շնորհակալու-
թյուն հայտնել մեր թանգարանների աշխատավորնե-
րին այն աշխատանքի համար, վոր տարել են նրանք
Հոկտեմբերյան հեղափոխության առաջինտարիներում,
հավաքելու ու պահպաններու համար այն արժեքները,
վորոնք ներկայումս գտնվում են մեր կհնարոնական
ու տեղային թանգարաններում:

Յես անհրաժեշտ եմ համարում առանձնապես նշել
նաև այն անձնուրաց աշխատանքը, վոր կատարել են
մեր թանգարանների տեխնիկական անձնակազմերը,
վորոնք հաճախ իրենց ուսերի վրա յեն տարել թան-
գարանային շինարարության գլխավոր դժվարություն-
ները Հոկտեմբերյան հեղափոխության նվազումների
համար մղվող պայքարի ծանր տարիներում:

Յեվ այնուհետև մեծ վստահությամբ լես կոչ պի-
տի անեմ թանգարանային գործի բոլոր աշխատավոր-
ներին, վորպեսզի նրանք պատմական շրջտնի ներկա

պարմաններում իրենց մասնագիտական ամբողջ գիտու-
թյունը գործադրեն թանգարանային ցանցի ու թան-
գարանային աշխատանքի հիմնական վերակազմության
վրա, նպատակ դնելով ամեն կերպ սպասարկել միլիո-
նավոր աշխատավոր մասսաների մեջ տարգող քաղա-
քական-կրթական աշխատանքին, պոլիտեխնիկական
լուսավորության, գիտական-հետազոտական աշխատ-
անքների գլխավոր խնդիրներին, բարձրագույն գլոբոց-
ներում մասնագետներ պատրաստելու աշխատանքին,
մասսայական դպրոցի պոլիտեխնիկացման խնդրին և
այլն, այսինքն ամեն կերպ ձգտել—թանգարանը դարձ-
նել սպասարկու պլրուետարիատի դասակարգավիճակին կռվին
ու սոցիալիզմի հաղթական առաջընթացին:

Այս խնդիրն, ինարկե, չի կարելի իրագործել մի
տարվա ընթացքում, բայց այնուամենանիվ հնգամյա-
կի առաջիկա երրորդ տարում մենք կիալ պիտի մոտե-
նանք նրա գործնական իրացմանն ու աշխատենք այդ
ասպարիզում հտանել վճռական բեկման:

Այն արգելքները, վորոնց մենք առաջին հերթին
կհանդիպենք այս խնդրում, հանդիսանում են՝ թան-
գարանային աշխատավորների կազրերի անբավար-
ցությունը, թանգարանալին շինարարության կարեվո-
րագույն պլրոբլեմների տեսականորեն թույլ մշակումն
և անբավար նյութական բազան, վոր ներկայումս
մենք ունենք մեր տրամադրության տակ այս գործում:

Վերջին տարիներս կառավարությունը մի շաբք
միջոցներ ձեռք առավ թանգարանային գործի ու թան-
գարանային աշխատավորների նյութական դրությունն
ամրապնդելու համար: Մենք ամեն կերպ կաշխատենք
առաջիկացման ավելի ևս բարեկավելու դրությունն այդ

ասպարիզում: Նյութական բաղալի չափազանց անբարպար վիճակն ամենազլխավոր խոչընդունելից մեկն և հանդիսանում թանգարանային ցանցի ու թանգարանային աշխատանքի հիմնական վերակազմության դորձում:

Սակայն թանգարանային ամբողջ շինարարության ամենակարևորագույն պրոբլեմը նրա զարգացման ներկա շրջանում հանդիսանում ե կազմերի պրոբլեմը: Այդ պրոբլեմի լուծումն անմիջապես պետք է առաջին տեղը գրավի թանգարանային գործի պլանի մեջ:

Սոցիալականի թշնամի տարրերի դասակարգավիճ ընդդիմությունն իր արտացոլումն և գտնում մեր կուլտուրական շինարարության և այս ասպարիզում: Թանգարանային աշխատավորների մի վորոշ մասն ընդդիմանում և թանգարանային գործը նոր հիմունքներով վերակադրելուն: Այս բանն զգալի չափով սրում թանգարանային կազմերի հարցի լուծումը: Բայց այդ սրումը թանգարանային կազմերի պրոբլեմի գործնական դըրման ժամանակ չափազանց մեծանում և թանգարանային ցանցի վերափոխման կապակցությամբ:

Վերջին տարիներս ավելի ու ավելի մեծ նշանակություն են ստանում զավառագիտական թանգարանները: Տարեց-տարի անընդհատ ավելանում և թանգարանների այցելուների թիվը: Յեթև 1928/29 թվին ՌՍՖՌՀ Լուսադողկոմատի թանգարաններն ունեցել են մոտ 13 միլիոն այցելուներ, ապա 1929/30 թվին նրանց թիվը անցել և 18 միլիոնից:

Մենք պետք ե ամբազնդենք և կամրապնդենք կենտրոնական մասնագիտական թանգարանների (պատմական, գեղարվեստական, ժողովրդագիտական և այլն) գործություն ունեցող ցանցը:

Մենք պետք ե հիմնովին բարելավենք և կրաքեւակենք մեր դավառագիտական թանգարանները: Մենք պետք ե ունենանք պոլիտեխնիկական թանգարանների նոր ցանց, վորոնց մի մասը կմտնի դավառագիտական թանգարանների կազմի մեջ, իսկ մի մասը գոյություն կունենա իբրև ինքնուրույն թանգարաններ: Ցեվ պետք ե աշխատել, վորպեսդի սոցիալիզմի կառուցման ամեն մի գործնական քայլ՝ իբրև լուծում, շրջանում, թե հանրապետության մեջ, անմիջապես իր արտացոլումը գտնի թանգարանում:

Մենք պետք ե աշխատենք, վորպեսդի իբրև արդարանական նոր հետազոտությունների արդյունքները, հումուզի նոր աշխակները, սոցիալիստական ինդուստրիայի գործարանների, խորհուտանալությունների ու առաջավոր կոլտնտեսությունների նոր արտադրանքներն իբրև եքսպոնատ ցուցադրվեն մեր դավառագիտական թանգարաններում:

Սոցիալիստական վերակառուցման շրջանում գոյություն պիտի ունենա թանգարանների միասնական մի ցանց, իրենց հիմնական մասներում որդանապես կապված իրար հետ: Յեվ այս տեսակետից թանգարարանային աշխատավորների նոր կազմերի հարցն ստանում և առաջնակարգ կարևորագույն նշանակություն: Նրանք՝ այդ կազմերն իրենց վրա պիտի վերցնեն պայմանը նոր թանգարանի համար, թանգարանային նոր ցանցի համար, թարգարանի նոր ներքին կազմակերպության համար և թանգարանային նոր եքսպոզիցիայի համար, վոր հիմնված լինի մատերիալիստական գիտելիքիալիզմի սկզբունքների վրա:

Թանգարանը պետք ե լինի կուլտուրական հեղափոխության գործիքներից մեկը:

Թանգարանը պետք ե լինի դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքների գերագույն գիտական արժեքի պարզ ցուցանիշն ու պրոպագանդիստը՝ իսկ դրա համար նա պիտի կազմակերպված լինի ալդ սկզբունքը ների հիման վրա:

Թանգարանների վերաբերմամբ այդպիսի պահանջ գնելուց հետո պետք ե նախազգուշացնել թանգարաբանային աշխատավորներին այն դժվարությունների մասին, վոր պիտի հանդիպեն նրանք թանգարանների արդյուն ներքին վերակազմության գործում, պետք ե հիշեցնել ալդ վերակազմությունն իրագործելիս լուրացանչուր տիպի թանգարանի առանձնահատկությունները ինսամքով հաշվի առնելու անհրաժեշտության մասին և այդ գործին թեթև վերաբերմունքից սպառնացող փոտանդի մասին, վորը կարող ե անվանարկել վերակազմության գաղափարն անգամ:

Կունտսկամեր-թանգարաններ մեզ հարկավոր չեն: Մենք պիտի խորտակենք ինտուիտ հնամոլությունը թանգարանային շինարարության մեջ: Բայց մենք առանձնապես թանգարանների զարգացման ներկա շրջանում չպետք ե թույլ տանք թանգարանային գործի վերակառուցման խնդրի գոհեկացումն ու թեթև մոտեցումը դեպի նրա գործնական լուծումը:

Այս ամենն առանձնահատուկ նշանակություն են ստանում, իբր ինկատի լինք առնում մեր ներկայիս ունեցած թանգարանային մասնագիտական կազրերի տակա դրությունը:

Մեր թանգարաններն ունեն կազրեր թանգարանային հին աշխատավորներից, վորոնք հաճախ լավ հանաչում են «իրերը», վոր թանգարանային գործի

համար ահազին նշանակություն ունի, բայց միաժամանակ հաճախ շատ հեռու յեն մարզուղմից, յերբեմն ուղյունիսկ թշնամի նրան:

Իսկ մեր թանգարանային յերիտասարդությունը գեռ միանգամայն անբավարար չափով ե ճանաչում «իրերը», մի շաբթ գեղքերում գեռ չի տիրապետել իր մասնագիտությանը:

Թանգարանային կազրերի արդյունքի ըրությունն ավելի ևս ընդգծում է այդ պրոբլեմի նշանակությունը թանգարանային ամբողջ շինարարության համար:

Անհրաժեշտ ե մեզ ծավալել մեր թանգարանների համար մասնագետների նոր կազրեր պատրաստելու գործը, մասնագետներ, վորոնք իրենց անձի մեջ միացնեն մարզուղմը թանգարանային տվյալ մասնագիտության հետ, լինեն կազմակերպողներ թանգարանի իրերեկուրուրական հեղափոխության գործիքներից մեկի:

Թանգարանային մատնագետների նոր կազրերը կարողություն պիտի ունենան դիտելու և ուսումնասիրելու իրերը նրանց գիտական կազմական զարգացման տեսակետից:

Այս խնդիրը վհչ մի կերպ չի կարելի հաշտեցնել դատարկ խոսքով մարզուղմ-լինինիզմը յուրացնելու և լոկ ձևականորեն նրան «տիրապետելու» հետ, վոր վորոշ գեղքերում նկատելի չե մեր թանգարանային աշխատավորներ պատրաստող վուղերում: Թանգարանային կազրեր պատրաստելու պայման կազմի վրա անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել:

Մեր թանգարանային կազրերի պրոբլեմը ներկայումս առաջնակարգ նշանակություն ունի: Թանգարանային առաջին համադումարը պետք ե ընդգծի այդ

Արոբլիմի լուծման գործնական ռեղին, դանելով այն
թանգարանային շինարարության դարձացման տվյալ
ետապի կարևորագույն խնդիրների կապահցությամբ
վերակառուցողական ըրջանի պայմաններում:

Թանգարանային առաջին համագումարին ցան-
կանում եմ հաջողություն իր աշխատանքների մեջ:

Ժողովրդական կուսավորության Կոմիտար՝ Յ. Թուրինը

29/ХІ 1930 թ.

Վ. Հայրման

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ՆԵՐԿԱ ԵՏԱՄՈՒՄ¹⁾

Ընկերներ, յես հնարավորություն չունեցա ան-
միջազիս մասնակցելու թանգարանային առաջին հա-
մագումարի աշխատանքներին, բայց ուշիւուսի յես
հետեւմ եյի, ինչպես զեկուցումների ընթացքին, վո-
րոնք դուք լուրմ եցիք այստեղ՝ համագումարում, այն-
պիս ել մտքերի փոխանակության, վոր տեղի ելին ու-
նենում այդ զեկուցումների շուրջը, թեև, իդեպ տած,
մտքերի փոխանակության սղագրությունը տարվում
եր բավական անբավարար ու չափազանց ուշանում եր:

Ներկա համագումարը մենք անվանումենք թան-
գարանային առաջին համագումար՝ Ասում են՝ մի քանի-
տարի առաջ տեղի լի ունեցել ինչ վոր թանգարանա-
յին համագումար, թե թանգարանային խորհրդակցու-
թյուն, սակայն ինչ վոր ե, այդ համագումարն անցել
է միանդամաբն անհետ և ինձ ասացին, վոր նրա գո-
յությունը վերականգնելու համար թերևս կարիք մնի
հատուկ պեղումներ կատարել: Սակայն հազիվ թե դրա
կարիքն զգացմի, մանավանդ, վոր թանգարանային հա-
մագումարը, վորի աշխատանքները մենք վերջացնում
ենք ոյսուր, ոկիզը պիտի զնի և համարեն կդնի
այնպիսի թանգարանային աշխատանքի, վորը թան-
գարանային շինարարությունը վերջնականացես հանի-

¹⁾ Ճառ, արտասանում առաջին թանգարան համագումարում
3/XII 30 թ.

այն պյուղական կածաններից, նույնիսկ փակուղիներից, վորոնց մեջ նա գտնվում եր մինչև վերջին ժամանակներս:

Հոկտեմբերյան հեղափոխությունը թանգարանաւին գանձերը կորդեց շահագործողների ձեռքից ու մատչելի դարձրեց այն ամենալայն աշխատավոր մասսաներին: Սակայն թանգարանային աշխատանքի այդ շրջանն, ընկերներ, զուգադիմեց այնպիսի մի մոժենտի խորհրդավիճակի ակտության պատմության մեջ, իերը մեր բոլոր ջանքերը՝ մեր լերկրի միլիոնավոր բանվորների ու գլուզացիության, կենտրոնացած հյիս գլխավորապես այն խնդրի շուրջը, վորպեսզի լուծարքից ենթարկենք աղնվականների հողատիրությունն ու հիմքից կործաննեք կապիտալիստական դասակարգերի տնտեսական տիրապետության ապարատը: Լենինն ասում էր այն ժամանակ, թե նոր տնտեսական կազմ դեռ չի լեզեր վոր նա դեռ նոր և «հիմնավորվում» — ինչպես արտահայտում եր նա: Պետք ե ասած, որ լենինն, որինակ, նույն կերպ արտահայտվեց դրության մասին քաղաքացիական կոիվների վերջին, յերբ 1921 թվին ասաց, թե «մեղանում խսկական մոտեցում սոցիալիստական տնտեսությանը, նրա հիմքի կառուցմանը—չկա»: Ներկայումս մենք հեռու լենք ալդ ժամանակներից, սերկայումն մենք սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում խսկապես հասել ենք հսկաչական բարձրության: Մենք վստաք ենք զբեկ սոցիալիզմի շրջանը: Սակայն, մինչդեռ սոցիալիստական շինարարության բոլոր ճյուղերում մենք հասել ենք այդպիսի բարձրության, դժբախտաբար պետք ե նշել, վոր թանգարանները շատ լերկար կանդ առան իրենց զարգացման

նախկին աստիճանի վրա, նրանք չափազանց յերկար կանգ առան այնպիսի մի շրջանում, վորպիսին սոցիալիստական բոլոր ձեռնարկներն իրենց հանրագումարով շատ վաղուց անց են կացել արդեն:

Են դարձալ կարենը եմ համարում կը կնել այն, ինչ առացի իմ վողջույնի խոսքի մեջ, այն՝ վոր յեռ հեռու յեմ այդ բանում թանգարանային աշխատավորներին մեղադրելու մաքից: Յես կարծում եմ, վոր այդ խնդրում պատասխանատվությունն առավելապես ընկենում և ժողովրդական կուսակորության կոմիսարիատի այն մարմինների վրա, վորոնց ձեռքին և լեզել թանգարանային ամերող գործի անմիջական հսկողությունը: Յես կասեցի, վոր «արոցիկզմն» այստեղ թողել և մեզ մի վատթար ժառանգություն, վորի հետքերը դեռ մինչև որս ել կենդանի լեն թանգարանային շինարարության մեջ: Ներկայումս մենք դեռ շատ հեռու յենք թափակելուց թանգարանային անցյալի այն ժառանգությունը, այն հետամնաց թանգարանային հնամուլությունը, վորն այսքան լերկար ժամանակ հնարավորությունը, վորն այսքան լերկար ժամանակ հնարավորությունը ու այժմ ել դեռ թույլ չի տալիս թանգարանային շինարարական հավասարվելու սոցիալիստական շինարարության հիմնական հուղերին: Վերջին տարիներս ինձ հաճախ և վիճակվում զավառներում շվիզել թանգարանի գործնական կյանքի հետ: Ծրջագալելով ՌՍՖՍՀ ու վողջ Միության ամենահեռավոր շրջանները, յես ացելեցի յերկարացին, շրջանային ու հանրապետական թանգարանները: Յեվ ինձ համար ալժմ միանգամակն ակներնե, վոր հին հետադիմ-հնամուլական ժառանգությունը թանգարանային շինարարության ասպարիզում թանգարանների ալդ ցանցի վրա հայտնաբերությունը թանգարանների ալդ ցանցի վրա հայտնաբերությունը

վել և թերեւա ամենակարուսէ կերպով, Շատ հոգախ աչդ թանգարաններն իրենցից ներկայացնում են ամենալավ դեպքում կարգ ու կանոնով զասավորված իրերի մի ժողովածու, խակ ամենավատ դեկլում—մի շենքի մեջ անկանոն կերպով իսար վրա թափած իրերի մի կույտ միայն: Կտաբը լազես յերևաց այստեղ, վորչկա և վոչ մի դիրեկտիվ ու ցուցմունք թանգարանային ամբողջ գործի վերաշինության վերաբերյալ թանգարանի ներքին կազմակերպության, թանգարանային հքսպողիցիայի սկզբունքներով, վլորոնք համապատասխանելին սոցիալիստական շինարարության պահանջներին: Յես կարող ելի, ընկերներ, տասնյակներով որինակներ քերել մեր զավառագիտական թանգարանների ապշեցուցիչ յետամացնցությունից, ապշեցուցիչ տղքառությունից ու չքավորությունից, վորի մեջ զտնը-վում են նրանք դեռ մինչև որս: Յեզ յես այստեղ կոչ պիտի անեմ համագումարին, վորպեսզի թանգարանային աշխատավորներն առաջին հերթին ձայն բարձրացնեն հոգուտ այնպիսի վերաբերմունքի՝ գեղ ամբողջ թանգարանալին ցանցը, վորը նարարարություն տա մեզ իշխանության տեղական մարմինների ու կուսակցության աեղական կազմակերպությունների աջակցությամբ ձեռնարկել ամբողջ թանգարանալին զօրծի վերաբերին նյութական նոր բաղայի վրա:

ՄԵՆՔ այստեղ, ի՞նքնի, կհանդիպինք շատ որբեկ-
տիլ ու սուբյեկտիլ դժվարությունների, բայց յես հա-
մոզված եմ, զոր լիբը թանգարանային տղիստավոր-
ները հայտնաբերեն բավականաչափ ինունդ, տղա տե-
ղական կազմակերպությունների աջակցությամբ մենք
պնապայման կկարողանանք համեմատաբար կարճ միջո-
ցում հասնել մեծ արդյունքների:

Յես կամենում եմ, ընկերներ, մատնացուց անել
նաև այն հանգամանքի վրա, վոր մեր կենտրոնական
թանգարաններն անդամ դեռ չեն վերացրել անցյալ
շրջանի հետքերը մեր թանգարանների պատմության
մջ, և ամենից առաջ՝ կտրված լինելը ժամանակակից
պհանջներից, կասի թուլությունը, յերբեմն նույնիսկ
մխանդամայն ըացակալությունը այն իննդիրների հետ,
վոր դնում ե թանգարանի առաջ այսորվան որը:

կոմիտեի շրջանի և սոցիալիստական շինարարության վերջին տարիների քաղաքական կարիկատուրան (ծաղրանկարը) և ցուցաբերվի Տրեայակովկում, ընդ ամին անպայման լավագույն որիգինալներով (բնանկարներվ):


Մեծ դժվարություններ չեմ տեսնում յես այստեղ: Համագումարում մի շարք ճառախոսներ դուրս յեկան այն բանի դեմ, թե չի կարելի խորհրդադին զանազան հիմնարկություններից ու թանգարաններից հանել գեղանկարչության ու քանդակագործության համայստանին լավագույն որինակները, մեր կենտրոնական գեղարվեստական թանգարաններում և առաջին հերթին Տրետյակովկում տեղափորելու համար: Ժողովրդական Լուսավորության Կոմիսարիատը մտադիր են ուտակա ժամանակներում մի շարք քայլեր անել, վրապեսզի հաջողեցնի հրատարակել տալ համապատասխան կառավարչական դեկրետ: Ճառախոսներից վոմանց առարկումներն այդ որինակներն հանելու առաջարկի դեմ յես համարում եմ միանգամայն սխալ ըստ լուսում նրանցից թանգարանային սեպարատիվմի հու և փչում:

Մենք ամենքս միասին պետք են աշխատենք, վոր մեր կենտրոնական գեղարվեստական թանգարանները կարողանան բավարար չափով պարզ արտացոլել խորհրդային գեղանկարչությունը, խորհրդադին քանդակագործությունն ընդհանրապես ու խորհրդագին քաղաքական կարիկատուրան մասնավորապես, իրենց զարգացման բոլոր շրջաններում: Ճառացի կերպով խալտառկություն և թանգարանային գործի արագիսի վարումը, յերբ նրա հետևանքով մեր կենտրոնական նկար-

չական գալերեան չունի եքսպոնատներ, վորոնք արտացոլելին գեղանկարչության, քանդակագործության և այլն զարգացումը Հոկտեմբերյան հեղափոխության հետագա տարիներում: Յես նամակներ ունեմ, վորոնց մեջ գերագույն զարմանք են հայտնում հատկապես այն տոթիվ, վոր մեր կենտրոնական-գեղարվեստական թանգարանները խորհրդացնին զեղարվեստի բաժանմունքներ չունեն: Մենք պետք են վերջ զնենք այս բանին գերջին կիսամյակում այս ուղղությամբ քիչ-միշտ բարված են արվում և Տրետյակովի գալերյում, բայց դեռ շատ քիչ: Միքանի գավառադիտական թանգարանների ու Տրետյակովի որինակները, վորոնց մասին յես խոսեցի այստեղ, հենց միայն պատահմամբ ձեռքիս տակ ունեցած մեր թանգարանային գործի մեջ գեղարվեստական բացերի լվուսարցիաներ: Իհարկե, պետք տարրական բացերի լվուսարցիաներ: Իհարկե, պետք չեղացնել գրանք, այդ մասին, ասենք, յերկար խոսելու կարիք են չկա:

Սակայն, պետք են ասել, վոր այն պահանջները, վորոնց մասին յես նոր խոսեցի, — գրանք միանգամայն ըրավատար չեն: Դրանք սոսկ ուղղութն են անցյալի ամենառաջեցուցիչ ու ամենանթուզլատրելի սխալների — և միայն այդքան, Մենք ներկայում չենք կարող ու չպիտի սահմանափակվենք, իհարկե, միայն այդ կարգի միջոցուումներով:

Պուլտուրական հեղափոխությունը դեռ չի հասել մեր թանգարանների պատերին: Յես չեմ ժխտում, վոր վերջին տարին մենք ունենք աներկարայիլի առաջխաղացություն: Թանգարանային այս համագումարը, վոր ներկայիս մենք ըստներ, բարձրական ցալտուն կերպով վկայում են այդ մասին: Բայց այդ առաջխաղացումները



15323-57

շատ քիչ են: Դրանք չեն վերացնում այն դրությունը, զար կուլուրական հեղափոխությունը դեռ չի գլորվել մինչև մեր թանգարանների պատերը: Սոցիալիզմի մեր յերկում կառուցման ներկա շրջանը բոլորովին նոր կերպով և դնում թանգարանների հարցը: Սոցիալիզմական շինարարություն—դա պրոլետարական պետքանիշան զանազան գործնական միջոցառումների հոկարական հսկմամբումն ե, դա պրոլետարիատի գասակարգացին կովի շրջանն ե, դա գործնական իրացումն ե նրա սոցիալիստական արշավի, նախ սոցիալիզմի կառուցման ու դասակարգային կովի դանազան կարևորագույն մասերում, իսկ ապա վերջին տարրում—նաև ամրող ֆրոնտում: Մենք այժմ հասել ենք այնպիսի շրջանի, որը սոցիալիզմի կառուցման գործում գտնվում ենք արդեն հսկայական բարձրության վրա: Յեվ մենք պետք ե աշխատանք, վորպեսզի թանգարանային շինարարությունն որգանապես միավորվի այդ սոցիալիստական միջոցառումների ընդհանուր գումարին, դառնո մի մասնիկը սոցիալիստական շինարարության, մի նաև նիկը սոցիալիստական արշավի: Մենք ներկայիս արդեն չենք կարող բավարարվել այն միջոցառումներով, վորոնք միանդաման ընդունելի կարող ենին հսմարվել վերականգնման շրջանում: Սոցիալիստական միարարության ասպարիզում ձևոնարկված բոլոր միջոցառումների հսկայական ծավալումը, նրանց թվում և կուլտուրական միջոցառումները պահանջում են թանգարանային գործի բոլոր գործնական խնդիրների նոր ձևակերպումն: Ենինք մի ժամանակ ն. կ. Կրուստիայի պոլիտեխնիզմի վերաբերմար առաջադրան թերզիսների մասին արած իր նկատողությունների մեջ

ասում ե, վոր մենք պետք ե ձեռնարկենք մի շաբք «ներկայիս արգեն մեզ մատչելի միջոցների պոլիտեխնիկական կրթության վերաբերմար», և ի թիվս այդ միջոցների նա իմիջի այլոց նշել ե և այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝ «պոլիտեխնիկական կրթության վերաբերակ փոքրիկ թանգարանների կառուցումը, գնացքների, շոգենավերի և այնա: Անա թե ի՞նչպիս եր զնում այս հարցը կենդինը, մոտ տաստարի առաջ: Բայց, ըսկերներ, այդ տաստարին հո ըոլորովին անհետ չանցմավ, այդ տաստարին հանդիսանում է Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների համար մզվող հսկայական կովի շրջանը, դա սոցիալիստական հսկայական նվաճումների տասնամյակն ե:

Ներկայիս մենք վորք ենք զնում սոցիալիզմի շրջանը, աշխատանք ենք տանում կապիտալիստական տարրերի դեմ ամբողջ ֆրոնտով ծավալվող սոցիալիստական արշավի պայմաններում: Յեվ մենք այժմ ամենաապարդ ու վորոշ կերպով պիտի ասենք, վոր ինդուստրիալ նոր հսկաների շինարարության այն ահազին թմափը, վոր ներկայում ծավալվում ե մեր ամբողջ տեսափը, նոր խորհանութեաությունների, մեքենարիալիտարային կայտնների շինարարությունը, գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման հսկայացիան թափը, կուլտուրական հեղափոխության վերելքը նոր աստիճանի վրա, —այս բոլորը պիտի պահանջեն մեղնից վոչ միայն այն, վոր մենք համապատասխան կերպով վերակազմենք արդեն գոյություն ունեցող թանգարանալին ցանցը, այլ և այն, վոր մեր առաջ թանգարանալին նոր թանց սահմանական իշխողությունը:

Մեզ պետք կլինեն ամենից առաջ նոր պոլիաելիսիկական, բնա-պատմական, մանկավարժական, տնտեսական և ընդհանուր գալառադիտական թանգարաններ: Նրանք իրենց հատուկ մեթոդներով պիտի սպասարկեն մասսայական կարիքներին, նույնպես և բարձրագույն գլուխութեական սկզբունքների վրա վերակառուցվող սկզբնական ու ավելի բարձր գլուխութեական չներին, հեռակա կրթության և այլն և այլն:

Պետք ե ուղղուկի ասել, վոր յեթե մենք ալնքան դժվարությամբ ենք ճոտենում այն հարցին, թե ինչպես գծինք թանգարանային հին ցանցի վերակազմության ուղիները, ապա նոր թանգարանի շինարարության փերաբերմամբ մենք պիտի հանդիպենք թերևս ավելի մեծ դժվարությունների: Բայց միենույն ժամանակ վորոշ կետերում այստեղ մեր ձեռքերն ավելի ազատ կլինեն ու մենք ավելի նախազարդարացած կլինենք շինարարական այս նոր գործի համար:

Կառուցել բոլորովին նոր թանգարաններ, վորոնք մեզ հարկավոր են ներկայիս, յերբ աշխատանք ենք տանում ամբողջ ճակատով սոցիալիստական արշավ ծավալելու լրջունքի տակ, ինարկե, վորոշ նկատառութերով ավելի հեշտ ե, քան հին թանգարանները վերակազմելը: Սակայն այստեղ յես ձեզ պիտի նախազգուշացնեմ, վորպեսզի վոչ մի մտապատրանք առաջ չգա, — վոր ալնուամենայինիվ հիմնական խնդիրը, վոր կանգնած ե մեր առաջ մոտավոր շրջանում, — դա թանգարանային հին ցանցի վերակառուցման խնդիրն է, ըստ վորում մենք, դժբախտաբար, դեռ չենք հասել այն կետին, վոր ներկայումս արդեն գործնականապես

կարողանալինք մեր առաջ դնել լայն կերպով ու կատարելապես սարքավորված թանգարանալին նոր ցանցի կառուցման խնդիրը:

Սակայն այսորվա համար չդնելով այդ հարցը, մենք այնուամենայինիվ չենք կարող հրաժարվել նրանց նույնիսկ այս առաջին հնդամակի պերսպեկտիվի մեջ, Այնպիսի հսկաներն, ինչպիսիք են Ստալինգրադի տրակամորշինը, Դնեպրոստրույը, Մակոմիսարույը, Նիժնիգորոդի ավտոշինն ու մի շարք այլ հսկա գործարաններ՝ սկիզբ կընեն, ինարկե, մարդկալին ահազին նոր կուտակումների, այսինքն կորիզ կդառնան նորանոր քաղաքների: Յեվ յեթե մենք այլ քաղաքների վերաբերմամբ ներկայիս հարց ենք դնում, թե ի՞նչպիս պետք ե կտղմակերպել այնտեղ զպրոցական ցանցը, ի՞նչպիս պետք ե կտոռուցել այնտեղ մի շարք հիմնարկներ մասսայական-կուլտուրական աշխատանքի համար, ապա միանգամայն բնական ե, վոր հենց այդ կապակցութեամբ ել ալժմ արդեն պետք ե դնել և նոր թանգարանային շինարարության պլանի խնդիրը:

Սակայն, ընկերներ, մենք ունենք վոչ միայն նոր սոցիալիստական ինդուստրիալ հսկաների շինարարություն, այլ արդեն ունենք նաև շինարարության ահազին ծավալումն այնպիսի հետևողական-սոցիալիստական տիպի ձեռնարկների, ինչպիսիք են խորհարնեանություններն ու տրակտորավին կայանները: Յեթե մենք մեր թանգարանային գործում զանց առնենք այդ հեռանկարները, ապա անուղղելի սխալ գործած կըլինենք: Մեզ անհրաժեշտ ե, վոր մեր գավառագիտական թանգարաններն առաջին հերթին աշխատեն ձեռք բերել իրենց լերկրալին ու շրջանային խորհրդային

մաբմիններից հատուկ վորոշում այն մասին, վոր ամեն մի նոր արտադրանք, վորն այս կամ այն չափով աշքի կը նկնի իր աջակցությամբ սոցիալիզմի առաջնթացմանը տվյալ տերիտորիայում, անհապաղ իր արտացոլումը գտնի համապատասխան եքսպոնատի ձևով, վորը պարտադիր կարգով ստացվի մեր գավառագիտական, շրջանային ու հանրապետական թանգարաններում:

Մենք պետք ե աշխատենք, վորպեսզի ԽՍՀՄ կառավարությունն այս առթիվ հատուկ վորոշում կայցնի: Յեթե մենք որենք ունենք, վորի համաձայն մեր բոլոր նշանավոր գրադարաններին պարտադիր կերպով տրվում ե լույս տեսնող ամեն մի գրքից մի որինակ, ապա թող վորոշում լինի նաև պարտադիր եքսպոնատի վերաբերմամբ մեր գավառագիտական, շրջանային ու հանրապետական թանգարանների համար (ծափանարություններ):

Բացի այս կոնկրետ ցուցմունքից, յետ չեմ կամնա ալսաեղ զբաղվել զանազան ընդհանուր ցուցումներով այդ ասպարեզում, ըստ վորում յետ համարում եմ դա պրակտիկայի գործ, թանգարանային գործնական աշխատավորների գործ: Թանգարանարին գործի գործնական աշխատավորները պետք ե գտնեն զանազանակեալ գործնական ուղիներ, վորպեսզի հոգուտ թանգարանային գործի, հոգուտ թանգարանալին ցանցի ամրապնդման, նրանց ներքին կաղմակերպման ու թանգարանարին եքսպոզիցիայի ուղիղ գրման, ոգտագործման բոլոր ռեալ հանրավորությունները, վոր կստեղծվեն տվյալ իրերի ու շրջանի սոցիալիստական շինարարության ռեզիով առաջնթացման հետևանքով:

Դավառագործական թանգարանները պետք ե աշխատեն, վորպեսզի իրենց պատերի մեջ արտացոլեն նաև զյուղի կունկարիվացման սլրոցեսի հիմնական հատապները:

Յես միանգամայն, ընկերներ, հեռու յեմ, ինարկե, այն մտքից, թե մենք կարող ենք նոր թանգարանային հանգանակությամբ պարագել միմիայն ժողովրդական բնույթի կրող շինարարության վերաբերմամբ:

Ամենելին վոչ: Կուլտուրական շինարարության մի շարք ասպարեզներ պետք ե այս կամ այն չափով իրենց արտացոլումը գտնեն մեր թանգարաններում: Անպայման պիտի ապրեն, ամրապնդվեն ու դարձանան և Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո առաջ չեկած հեղափոխության թանգարանները: Յես զերագանում եմ, վորպեսզի այդ «արտացոլումները» կատարվեն զլխավորապես, յեթե կարելի յե ալսպես արտահայտվել, կենդանի եքսպոնատներով:

Զի կարելի հակաճառեր ինարկե, և դիագրամների ու լուսանկարների գեմ, սակայն պետք ե աշխատել ձեռք բերել կոնկրետ իրեր: Զե վոր մենք թանգարանը մտապատճերում ենք իրեն համապատասխան ձեռվ կազմակերպված կենդանի եքսպոնատների մի հավաքածու: Այնպիսի թանգարաններ, ուր զետեղված են բացառապես, կամ զրեթե բացառապես միայն դիացրամներ ու լուսանկարներ, ազգպիսի թանգարաններ մեղ պետք չեն (ծափանարություններ):

Մեզ պիտօք ե, վոր թանգարանը հանդիսանա կաղմակերպած ժողովածու այնպիսի իրերի, վորոնք սերտ կերպով կապված են պրոլետարիատի դասակարգակին կույի ու սոցիալիզմի շինարարության հետ այս պատմական հզոր շարժման բոլոր ասպարեզներում:

Յա տեսակի թանգարանների վրա յես կանգ առա այսպես մանբամասն վհչ նրա համար, վոր վորեն չափով նպատակ ունեմ անտես առնելու մասնագիտական-պատմական թանգարանները, կամ անդիտանալ ոպատմական մոտեցման նշանակությունը մասնագիտական ու կոմպլեքսային թանգարաններում: Յես այդ անում եմ բացառապես այն նպատակով, վոր ձեր ուշադրությունը կենարոնացնեմ ամենից առաջ ու դիմագրապես թանգարանային գործի այդ կողմի վրա և թանգարանային ցանցի այդ մասի վրա:

Անինն ասել ե, թե լերիտասարդության կրթությունն ու դաստիարակությունը սերտ կերպով կապված պիտի լինի «Նրանց մասնակցությամբ բոլոր աշխատավորների ընդհանուրը կովին շահագործողների գեմծ: Յեթե ուզիդ և այդ լերիտասարդության կրթության ու դաստիարակության վերաբերմամբ, լեթե այդ ուզիդ և գործոցների վերաբերմամբ, ապա ուրեմն ճիշտ նույն կերպ ուզիդ և այդ նաև թանգարանների վերաբերմամբ, ըստ վորում թանգարանը—դա վհչ միայն կուլտուրական շինարարության նշանավոր գործիքներից մեկն ե, այլև ամենաուժեղ կերպով ազդող ու ոժանդակող միջոցներից մեկն և մեր ժողովրդական կրթության ամբողջ ցանցին—ուկսած մասսական դպրոցից ու վերջացրած մեր համալսարանների ցանցով: Յեկ յեթե մենք դպրոցների վերաբերմամբ, վորոնք պիտի տան մեզ նոր մարդուն, դպրոցների, վորոնց մենք պատկերացնում ենք պոլիտեխնիկական սկզբունքների վրա հիմնված միայն,—իսկ պոլիտեխնիկմը կոմունիստական դաստիարակության սխատեմի մի մասն և միայն, — լեթե մենք այսուեղ ուսուցինք, վոր այդ կրթու-

թյունը սերտ կերպով կապված պիտի լինի բոլոր աշխատավորների ընդհանուր կովի հետ ընդգեմ շահագործողների, ապա այդ պարտադիր և և թանգարանների համար, իերը կատարեն նրանք այն ընդհանուր կուլտուրական նեղագործության գործիքներից մեկը: Դա միաժամանակ պարտադիր և թանգարանների համար և այն տեսակետից, վոր նրանք պիտի կատարեն մի ամբողջ շարք ոժանդակող խնդիրներ, նոր դպրոցի համար մզգող պարտարում, նոր դպրոցի, վոր պիտի տամեզ նոր մարդուն, Մենք ներկայիս հսկակական կոփվ ենք ուկսել պոլիտեխնիկական դպրոցի համար, մենք այդ կովի մեջ ներգրավել ենք տասնյակ հաղարավոր, հարյուր հաղարավոր բանվորներ: Այժմ, յերը լինում ես տեղերում, շրջաններում, պարզ ու վորոշ տեսնում ես, թե ինչպես մենք ներկայիս արդեն կարող ենք ձեռքով շոշափել այդ շինարարությունը նոր, աշխատավորական-պոլիտեխնիկական դպրոցի, վորը կտա մեզ վնչ թե տիրացուներ, այլ սոցիալիստական աշխատանքի հսկական մարդիկ:

Յեզ, իհարկե, լեթե մենք այդպես ծավալում ենք այդ կոփվը պոլիտեխնիկական դպրոցի համար, առա միանգամայն բնական և, վոր ամբողջ ցանցը բոլոր տեսակի, ձեի ու վորակի թանգարանների՝ անմիջապես մոնիեն այդ աշխատանքի մեջ: Այն ժամանակ կստացվի աշնաբիսի սերտ կապակցություն այդ վերաշննվող դպրոցի ու թանգարանային ցանցի մեջ, վորը չափազանց ուգուակար կինի և դպրոցի համար, և թանգարանների վերաշնության համար այն նոր սկզբունքների հիման վրա, վորոնցով այնքան ուշադիր ու

արդյունապիտ կերպով գրաղվեց թանգարանային առաջին համազումաբը:

Անինն ասել ե, վոր յերիտասարդության կրթությունն ու դաստիարակությունը կազմած պիտի լինի «քանիփորների ու դյուղացիների աշխատանքի հետ»: Մենք պետք ե թանգարանային գործն ել կապենք «քանիփորների ու դյուղացիների հետ»: Ընդ վորում, պետք ե աշխատես անել, վոր թանգարանները վոչ միայն, ինչեւ կարելի յե այսպէս արտահայտիեւ պասսիվ կերպով ընկունենարդյունքներն ու արտադրություններն առաջ ընթացող սոցիալիզմի, այլ վորպեսդի նրանք ներդրավելով իրենց մեջ իրեն եքսպանտ այն ամենը, ինչ վոր նոր և մեր սոցիալիստական շինարարութիւնն հակա աշխատանքի մեջ, կարողանան այդ նորի վրա ամրապնդելով իրենց հիմքերը, ակտիվ կերպով մասնակցել հենց սոցիալիստական շինարարութիւնն պրոցեսին, ոգնելով նրա թափին, ոգնելով սոցիալիզմի ամրապնդանն իր առաջընթաց շարժման յուրաքանչյուր ետապւում:

Այս անսակեւեց նույնակես միանգաման սպառտավրեցուցիչ ե թանգարանի համար այնպես դասավորել իր աշխատանքը, վոր նա նույնութեա միացած լինի քանիփորների ու դյուղացիների աշխատանքի հետ: Բանիփորների ու դյուղացիների աշխատանքը—պա վերացական բան չե, դա միանգաման կոնկրետ բան ե, վոր ներկայիս արտահայտվում ե առանցքով ու հարբուժավոր ինդուստրիալ ձեռնարկներով, առանցքով ու հարբուժավոր նոր խորհանութեաություններով ու մեքենատարակորակին կայաններով, միլիոնավոր գյուղատնտեսական արտելներով, կոմունաներով, նոր

գյուղացներով, կուլտուրական նոր հիմնարկներով և այլն: Պիտի կարողանալ այնպես կազմակերպել կամ, առվելի ճիշտ, այնպես հիմնականորեն վերակազմել թանգարանալին հին ցանցը, վոր նա սերտ կերպով կապված լինի բանվորների ու գյուղացիների աշխատանքի հետ սոցիալիզմի ներկա շրջանում, մեր սոցիալիստական աշխատանքի այն շրջանում, վորը մենք անգանում ենք «նեպի վերջին շրջան»:

Անինը յերիտասարդությանն ուղղած իր ճառի մեջ ասել ե և այն, թե «գասակարգային կախվը շարունակվում ե և մեր խնդիրն և բոլոր շահազգությունները հպատակեցնել այդ կավին»: Անինյան այս դըրուցիլ մենք առանձնապես ի նկատի պետք և ունենանք ներկա շրջանի պայմաններում, սոցիալիստական արշավի ծավալման ընդդեմ կոմպիտալիստական տարրերի, մեղ դասակարգային թշնամի տարրելոի հակարձակման և յերկրում դասակարգային կավի սըրման պայմաններում:

Այս, գուք հենց նոր կատարեցիք միանգաման որինական մի անգամանատություն, արտաքսելով այս դահլիճից պրոֆեսոր Աղեքին: Դուք այստեղ թանգարանակին աշխատավորների համագումարում կարողացած հասկանաւ, վոր դասակարգայնորեն կռիվը շարունակվում ե, և կարողացաք պատճել այն մարդուն, վորը համարձակվեց գուրս գալ այստեղ այնպիսի հայերացակետով, վորը դասակարգայնորեն թշնամական և մեղ ցակետով, վորը դասակարգայնորեն թշնամական և մեղ պրոֆետարական պետությանն ու նրա աշխատավորներիս: Յես հուսով եմ, վոր թանգարանային առաջին համագումարում վարվելով այդպես, զգուք կարողանաւ համարձական պատճենում, կոմունաներով, նոր

աշխատանքի ժամանակ ել տեղերում աչալուրջ կերպով վորոշել դասակարգային թշնամուն, ինչպես դուք արիք այդ այստեղ թանգարանալին առաջին համագումարում՝ (ծափահարություններ):

Դատելով ըստ սղագրության, դուք ինքներդ այստեղ բարբառել եք բավական մեծ քանակությամբ բավական անախորժ բաներ այն հիմնարկների վերաբերմամբ, վորտեղ աշխատում եք ինքներդ: Այդ հիմնա վրա յել յես անձամբ ինձ այդ մտքով ազատված եմ համարում վճչ միշտ հաճելի այդ պարտականությունից:—յես կարող եմ միշյն միանալ մեր թանգարանների ներկա դրության գնահատականի զգալի մասին: Բայց միանալ վճչ նրա համար, վճչ ընդգծած լինեմ փաստերը, յայլ նրա համար, վորպեսզի յեթե վճչ անմիջապես փոխենք այդ փաստերը, համենայն դեպք գոնե անմիջապես վեր քատենք թերու այնպիսի աշխատանքի համար, վորը սկիզբ դնի նրանց վերափոխմանը:

Յես կարծում եմ, ընկերներ, վոր յեթե մենք հայտնաբերենք մեր ամբողջ եներգիան, մեր գործի մեջ քաշենք մասսայական կազմակերպություններին, ինչպես կենտրոնում, այնպես ել տեղերում, և կարողանանք դրա շուրջը կազմակերպել բանվորական մասսաներին, ապա միանդամայն բնական ե, վոր թանգարանալին յերկրորդ համագումարին մենք հասած կլինենք մի այնպիսի զրաւթյան, վոր այլևս աղատված կլինենք մի շարք արև անհաճո գնահատականներից, վորոնք իրենց արտացոլումը գտան առաջին համագումարի սղագրության մեջ:

Եես միանդամայն ուղիղ եմ համարում այն, վոր

թանգարանալին առաջին համագումարին համակացել են իր խնդիրը, վհչ միայն թանգարանալին գործի հետ կապված նյութական-կազմակերպչական հարցերը քըն-նելու մտքով, այլ և այն մտքով, վոր նաև բարձրացրեց, կամ համենացն դեպս ձեռնարկեց ամեն միջոցի, վոր-պեսզի թանգարանային գործին վերաբերյալ խնդիր-ների քննադատությունը դրվի անպիսի բարձրության վրա, առանց վորի մենք չենք կարող ուղիղ գծով սկսել թանգարանալին հին ցանցի վերակառուցումը:

Այն, վոր մենք պետք ե վերակառուցենք մեր թանգարանները մատերիալիստական դիալեկտիկալի հիմունքներով,—դա բավական ակներկ ճշմարտություն ե, և այն, վոր մենք պիտի աշխատենք հասնել դրան թանգարանալին գործի բոլոր ճյուղերում, —դա նույնպես անկասկած ե: Սակայն, յես պիտի ասեմ ձեզ, վոր հեշտ ե այս առթիվ գեկուցում կարդալը, թեև այս առթիվ ել պիտի ասեմ, վոր թերևս այստեղ ել դժվար թե հաջողվի մի անգամից հասնել մտքի պարզության, —պակաս հեշտ չե համապատասխան յեղբակացություն գրելը, թեև նույնը և այստեղ — մտքի պարզության համեմելը հեշտ չե, —բայց անհամեմատ ավելի դժվար ե իրացործել հենց այդ վերակառուցումը, այսինքն իրերի կազմակերպումը թանգարանում մատերիալիստական դիալեկտիկայի հիմունքով: Կրկնում եմ, այդ կատարելու անհամեմատ դժվար ե և դուք միք դժգոհի իմ գեմ, յեթե յես ձեզ ասեմ, վոր այստեղ յես գիշ մի չափով չեմ ուղում վորեմ իլլուզիա ստեղծել:

Թանգարանալին առաջին համագումարին, թանգարանալին գործի պրակտիկներին մենք կտրուկ և ուղղակի պիտի ասենք, վոր դուք այստեղ կհանդիպաք

մի շարք դժվարագույն խոչընդուանելի և վոր դուք այստեղ,—սա արդեն կարելի է նախորոք ասել, —անխռուսափելիօրեն կանեք բավական չափով սխալներ, գործը նոր և ու չափազանց դժվար:

Այս գործն ավելի դժվար է, քան մի փելիսովիալական լավ գիրք զբելը և ավելի դժվար, քան առհասարակ գիրք զբելը:

Թանգարաններում իրեւը կազմակերպել այնպես, վոր նրանք հենց իրենց իրենց դասավորությամբ հանդիսանան մատերիալիստական դիալեկտիկայի կենդանի պրոպագանդիստներ, —դա շատ դժվար գործ է: Դա պահանջում է Մարքս-Լենինի մեթոդի տիրապետումն, մասնագիտական մեծ պաշարի հետ միասին: Յես անկենդորեն պիտի ասեմ, վոր ի՞նչ ինձ առաջարկեցին վորեւ թանգարան, վոր յես տանեմ այնտեղ այդ աշխատանքը, —իս այդ առաջարկից կհրաժարվելի անպայման: (Ծիծաղ և ծափանարություններ): Կհրաժարվելի վոչ թե նրա համար, վոր յես այդ խնդիրը հերթական չեմ համարում, կամ համարում եմ այդ անիրազործելի, այլ կհրաժարվելի նրա համար, վոր յես ինձ մատնագետ չեմ համարում թանգարանային գործի ասպարիզում: Յես կարծում եմ, վոր իրերը Մարքսի, Ենգելսի ու Լենինի մեթոդով դասավորելու համար, և դասավորելու գրագետ կերպով, —հարկավոր և վոչ միայն դիալեկտիկական մատերիալիզմը գործադրել դիտնար, այլ և պետք և գրագետ մարդ լինել թանգարանային գործի այն ճուղիի մեջ, ուր կամենում եք դասավորել այդ իրերը (ծափանարություններ):

Հնկերներ, իս իմ վողջույնի խոսքի մեջ ասացի ձեռ մեր յերիտասարդ կադրերի մասին, այն մասին,

վոր իմ կարծիքով թանգարանային կազմերի պատրաստման աշխատանքում մենք անշուշտ ունենք արդեն վորոշ առաջադիմություն: Սակայն յես մի անգամ ել պիտի ընդդեմ, վոր մենք պետք և աշխատենք, վորակեսպի մեր լերիտասարդ թանգարանականները լինեն վոչ միայն լավ մարքսիստներ (դա գլխավորն է), այլ լինեն և թանգարանային «իրերը» լավ ճանաչողներ, (Ծափանարություններ): Մենք պետք և ունենանք այնպիսի լերիտասարդ կազմեր, վորոնք իրենց անձի մեջ միացըրած լինեն մարքսիզմը թանգարանային բազմակողմանի կրթության հետ, այսինքն ավյալ մասնագիտության լիակատար տիրապետության հետ: (Ծափանարություններ):

Այս յերիտասարդությունը, վորին մենք ուղարկում ենք թանգարաններն աշխատելու, չպիտի շփոթվեն այն բանից, վոր աշխատանքի սկզբում կարող և պատահել վոր ամեն բան այնպես գուրս չգա, ինչպես ինքն եր կամենում: Աշխատանքի պրակտիկան թանգարանում, ուշադիր վերաբերմունքի հետ միասին դեպայդակտիկան, հնարավորություն կոտ թանգարանային ամեն մի աշխատավորի, ամեն մի առաջ քաշվածի լիակատար կերպով տիրապետել աշխատանքի արդ ճյուղին, և վերջինիքն դառնալ իսկական մասնագետ:

Թանգարանային գործում, նրա դարձացման ներկա աստիճանում մեր գլխավոր թշնամին հանդիսանում և հետադեմ հնամոլությունը, Մենք հայտարարում ենք նրա գեմ անողոք կոփկ, ըստ վորում ենց նա յե, վոր թանգարանային գործի զարգացումը կասեցնում և տվյալ աստիճանի վրա: Դա մեր գլխավոր թշնամին է, վորի գլուխը պիտի ջախջախենք մենք: (Ծափանարություններ):

Բայց, ընկերներ, մենք ունենք այստեղ և ուրիշ հակառակարդ ուժ, ճիշտ ե, վհչ զիմավոր, բայց համենայն դեպա այնպիսին, վորը մենք զանց չպիտի առնենք: Մեր մեջ թանգարանային գործում կա մի ձըգտում՝ թանգարանային վերակառուցման մի շարք խընդիրներ լուծել առանց բավականաչափ ճիշտ կերպով հաշվի տռնելու իրականությունը (նկութական բազան, թանգարանների զանազան տիպերը, մարքսիստորեն պատրաստված կաղրերի առկալությունը և այլն), Մենք կարող ենք կազմել շատ լայն թանգարանային պլաններ, մենք կարող ենք լեռնակայել վերացականորեն յերազել այնպիսի մի զանգված, վոր կարող և այնուամենայնիվ թղթի վրա բավական գեղեցիկ յերևալ, սակայն գործի մեջ՝ գործնականում կարող ե մեծ անախորժություններ առաջ բերել թանգարանային ամբողջ գործի զարգացման համար: Մեզանում տեղտեղ ձըգտում կա զբուրաբորոք եքսպերիմենտների (փորձերի), թեթև մոտեցում թանգարանային վերակառուցման խնդրի գործնական լուծմանը և գուեհկացումն հենց թանգարանային վերակազմությանը համապատասխան սոցիալիստական շինարարության խնդիրների: Մենք, ինարկե, չենք կարող թանգարանային գործի նոր եքսպուլիցիայում գնալ եքսպերիմենտների ուղիով (փորձերի): Բայց մենք պիտի խոսափենք դյուրաբորոքությունից, թեթև մոտեցումից ու սկզբունքի գուեհկացումից: Այս բոլորն ուշադիր կերպով ինկատի առնենք ու միահամուռ հարվածենք մեր զիմավոր թըշնամուն թանգարանային գործում, այսինքն հետագեմ հնամուռթյանը, վորը չի կամենում ցած գալ իր հին թանգարանային կոլեկցիոներական թառերից: (Մասիշարություններ):

Ամբողջ մի շարք զեկուցումներ, վոր դուք լսեցիք ու քննեցիք համագումարի պլենար նիստերում ու սեկցիաներում, հնարավորություն են տալիս համելու պարզ ու զորոշ սկզբունքային դիրքերի: Ցուրաքանչյուր գործի հաջողություն կախված է նրանից, թե վորչափ պարզ ու վորոշ և մեզ համար այն նպատակը, վորին մենք ձգտում ենք և այն ուղիները, վորոնցով մենք պիտի շարժենք առաջ: Այստեղ ել թանգարանների վերակառուցման սկզբունքների վերաբերմամբ մենք այս առաջին համագումարում հասանք այդպիսի տեսական պարզության, վորն, ինարկե, զզալի չափով հեշտացնում ե մեր թանգարանային գործնական աշխատանքը: Սրա մեջ յես տեսնում եմ մեր առաջին թանգարանային համագումարի հաջողություններից մեկը: Այժմ խոսքը ձերն ե՝ գործնականին ու զործնական աշխատավորներինը:

Այստեղ ինձ մոտ և մանգատալին հանձնաժողովի հաշվիտավությունը, վորը գուք պիտի լսեք: Յեկվ վարովհետև յես չեմ մանգատալին հանձնաժողովի կողմից զեկուցողը, խնդրում եմ ներեք ինձ, վոր վորոշ չափով բռնագրավում եմ մանգատալին հանձնաժողովի իրավունքները: Մանգատալին հանձնաժողովի հաշվիտավությունը մի շարք թվական սլունյակներով վավերացնում ե համագումարի կազմը: Յեկանական կարծիքով ինչն է այստեղ խրատական: Խրատական հանդիսանում և այն, վոր այս թանգարանային համագումարում, —յեթև վերցնենք վճռական ու խորելքրակցական ձայները միասին, —մասնակցում են զգալի թվով թանգարանային աշխատավորներ — կոմունիստական կուսակցության անդամներից ու կենինյան

կոմիտենանը Ես վկայում ե այս մասին, վոր մենք կարողացնել ենք արդեն հասնել այն դրության, վոր ներգրավենք կուսակցական վորոշ շերտ թանգարանային աշխատանքի մեջ:

Եթե վերցնենք համագումարի կազմն ըստ կըրթության, ապա 50 % կուսակցականների ու կոմիտետականների առկալության հետ մենք ունենք, որին համագումարին մասնակցողների մոտ կես մասը բարձրագույն կրթությամբ մարդկել:

Ես կարծում եմ, ընկերներ, վոր սա ևս հանդիսանում ե մի դրական հանգամանք: Ես դրական եմ համարում նաև այն, վոր մենք կարողացանք թանգարանային առաջին համագումարի պատգամավորների կազմի մեջ մտցնել և՝ թանգարանային յերիտասարդությանը, և թանգարանային մեծ ստաժով աշխատավորներին: Ես կարևոր եմ համարում առանձնապես նշելու այն, վոր համագումարին ներկա յեն վհան միայն ժողովրդական կուսավորության կոմիտարիատի թանգարանների ներկայացուցիչները, այլ ներկայացուցիչներ և այլ ժողովատների թանգարաններից (Ժողովատների և այլն): Այս բանը պարտավորեցնում ե մեզ ամենիս, վորպեսզի սկսենք իրազործել թանգարանային ամբողջ ցանցի միանական մեթոդական դեկավարությունը:

Մանգատացին հանձնաժողովը մատնացուց ե անում գործարանների ու ֆարբիկանների բանվորների ներկայացուցչության բացակայությունը համագումարում: Սա նշանակում է, վոր թանգարանային առաջին համագումարը գեռ չի կարողացել գրավել պրոլետարական

հասարակայնությունը ուշադրությունը: Թանգարանացին աշխատանքի այս գեֆիկտն անպայման պետք ե վերացնել տեղերում, ըստ վորում, յեթե թանգարանները կամենում են կուլտուրական հեղափոխության գործիքներից մեկը լինենք ապա նրանք պետք ե ներմուծման վորոշ ձև գտնեն մասսայական կազմակերպված կուլտուրական շարժման մեջ զորը ներկային ծավալվում և մեր վողջ Միության տերիտորիայում:

Թանգարանային գործի պրակտիկները տեղերում պետք ե անհապաղ ձավալեն մի շաբաթ միջոցառություններ, վորպեսզի դեպի թանգարանային գործը գրավեն տեղական կուսակցական կազմակերպություններին, ներգրավեն այդ գործի մեջ կոմիտարիատի յանը և գրավեն խորհրդային հասարակայնության առաջավոր տարրերի ուշադրությունը: Այս պարտադիր պայմանի իրացման գեպքում թանգարանները կուլտուրական հեղափոխության գործի գարձնելու ուղին զգալի չափով կհեշտանա և ժամանակի տեսակետից կկրծատվի:

Ես համոզված եմ, ընկերներ, վոր թանգարանային առաջին համագումարը կաջակցի թե կուսակցիություններին, և թե ձեզ տեղերում, աշխատելու, վորպեսզի թանգարանային շինարարությունն իր բոլոր մասերում սկսի իսկապես հավասարվել, —և վորքան ուժով, այնքան լավ, —սոցիալիստական շինարարության ընդհանուր պլանվոր գծին, ամբողջ ճակատով սոցիալիստական արշավի ծավալման ներկա շրջանում:

Թուզլ տվեք ձեզ թանգարանային գործի պրակտիկներիդ հաջողություն ցանկալ, վորպեսզի թանգարանները զարձնեք սոցիալիզմի շինարարության ու կուլտուրական հերուժության պահարկունեցած աշխատանքը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0142536

ԳԻՒՆ 25 ԿՈՒ (1 $\frac{1}{2}$ մ)

257-



А. БУБНОВ
О МУЗЕЯХ

Госиздат ССР Армении
Эревань — 1931

14509